Էդվարդ Ֆիջիջյանի աշխատասիրությամբ լույս տեսած սույն ժողովածուն առաջին կարևոր և հաջողված քայլն է գերմանալեզու մամուլում սփռված նյութերն ի մի բերելու և առանձին գրքով ներկայացնելու գործում: Գնահատելի է նաև, որ հեղինակի ուսումնասիրության առարկան դարձել են բացառապես օրաթերթերը, այն է՝ առավել ազդեցիկ և մեծ լսարան ունեցող լրատվամիջոցները:

Չորս հիմնական բաժիններից բաղկացած ժողովածուն բովանդակում է հատկապես գերմանական և շվեյցարական մամուլում 1912-1922 թթ. լույս ընծայված՝ Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը վերաբերող 160 հոդվածներ և այլ հրապարակումներ: Առաջին բաժնում գետեղված են Հայկական հարցին և բարենորոգումներին առնչվող՝ 1912-1914 թթ. տպագրված 69 հոդվածներ: «Առաջին աշխարհամարտը և հայերի ցեղասպանությունը (1914 թ. հուլիս-1918 թ. նոյեմբեր)» խորագիրը կրող երկրորդ բաժնում ընդգրկված են Մեծ եղեռնին վերաբերող 42 հրապարակումներ: 35 հրապարակումներ ամփոփող երրորդ բաժինը նվիրված է 1918-1921 թթ. տեղի ունեցած իրադարձություններին, իսկ չորրորդ՝ եզրափակիչ բաժնում, որը կրում է «Թալեաթ փաշայի դատավարությունը և Բեռլինում այդուհետ տեղի ունե-

ցած ահաբեկչությունները» խորագիրը, ներառված են Թալեաթի սպանությանը, Սողոմոն Թեհլիրյանի դատավարությանը և Նեմեսիս գործողության շրջանակներում տեղի ունեցած մյուս ահաբեկչություններին վերաբերող 22 հրապարակումներ:

Ժողովածուի կարևորագույն արժանիքներից է այն, որ այդտեղ ներկայացված են ոչ միայն պատմաբաններին քաջաձանոթ հեղինակների՝ առ այսօր գիտական հանրությանն ու ընթերցողին անհայտ հրապարակումները, այլև լրագրության ասպարեզում ժամանակին հայտնի, սակայն մոռացության մատնված անձանց հոդվածները, որոնք, փաստորեն, այդպիսով վերստին բացահայտվում են: Բնականաբար, ինչ վերաբերում է հիշատակված՝ առաջին խմբին պատկանող հեղինակներին, ապա ժողովածուն ի հայտ է բերում նրանց լույս ընծայած կարևոր նյութերը, որոնք մեծ նշանակություն ունեն նրանց գործունեության վերաբերյալ իմացությունն ու կատարած ուսումնասիրություններն ամբողջացնելու առումով: Այդպիսիների շարքում են դասվում հայ ժողովրդի բարեկամներ Պաուլ Ռոհրբախի, Կարլ Ռոթի, Արմին Վեգների և ուրիշների հրապարակումները: Իսկ երկրորդ խմբի պարագայում, ըստ էության, գործ ունենք պատմագիտության համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող նոր հեղինակային անունների և նրանց հրապարակումների հետ:

Ցավոք զգալի թիվ են կազմում նաև անանուն հրապարակումները, որոնց գերակշիռ մասը խնդրո առարկա հարցերով զբաղվող ուսումնասիրողների համար նույնպես զգալի արժեք է ներկայացնում: Այդօրինակ հրապարակումների հեղինակային ինքնության պարզաբանումը, անկասկած, պետք է դառնա հետազոտական խնդիր պատմաբանների համար:

Ժողովածուի առաջին բաժնում զետեղված հոդվածները փաստում են, թե նախապատերազմյան տարիներին խնդրո առարկա հարցերը որքան արդիական էին և ինչպիսի մեծ հնչեղություն ունեին գերմանախոս իրականության մեջ: Մասնավորապես, երբ Գերմանիան նույնպես ներգրավվեց բարենորոգումներին վերաբերող բանակցություններում, գերմանալեզու մամուլը սկսեց ակտիվորեն զբաղվել այդ թեմայի քննարկմամբ, ինչը վերջինիս համար իր հերթին խթան հանդիսացավ նաև լայնորեն զբաղվելու Հայկական հարցի և համիդյան կոտորածների լուսաբանմամբ: Սույն բաժնի հրապարակումները հիմնականում աչքի են ընկնում նյութի մատուցման և պարզաբանումների անաչառությամբ ու բազմակողմանիությամբ: Բազմաթիվ արժեքավոր հրապարակումներով հանդես են եկել Ջեյմս Գրինֆիլդը, Պաուլ Ռոհրբախը, Կարլ Ռոթը, Օսկար Բրեհմը, Շ. ֆոն Ռոզենը և ուրիշներ, որոնք ոչ միայն հանգամանակից անդրադարձ են կատարել Հայկական հարցի միջազգայնացման և հետագա զարգացումների պատմությանը, այլև լուսաբանել են հայ ժողովրդի ծանր դրությունը Օսմանյան տերությունում, 1890-ական թվականների և 1909 թ. Ադանայի կոտորածները՝ միաժամանակ

հիմնովին հերքելով թուրքական քարոզչության միջոցով Գերմանիայում հայերի մասին ի հայտ եկած բացասական տեսակետները:

Երկրորդ բաժնում զետեղված հրապարակումների համահավաք դիտարկումը երևան է բերում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեսակետների ու դիրքորոշումների հակասական և խայտաբղետ մի պատկեր: Դա, բնականաբար, հասկանալի կդառնա, եթե նկատի առնենք, որ պատերազմի տարիներին Գերմանիայում իշխող ռազմական գրաքննությունը հնարավորինս խոչընդոտում էր հայանպաստ նյութերի լույսընծայումը, իսկ 1915 հոկտեմբերից այդ ամբողջությամբ արգելվել էր: Այդ իսկ պատճառով գերմանական լրատվամիջոցները մատչելի էին միայն այն նյութերի համար, որոնք անքննադատ կերպով վերարտադրում և պաշտպանում էին թուրքական քարոզչությանը կապկող գերմանական պաշտոնական տեսակետները: Գերմանական լրատվամիջոցներում, ըստ այդմ, լայնորեն շրջանառվում էին հայկական համընդհանուր ապստամբությանը, հայերի պետական դավաճանությանը, Ռուսաստանի հետ նրանց համագործակցությանը վերաբերող ստահող տեղեկությունները, որոնք բնորոշ էին Ֆրանց Կարլի Էնդրեսի, Ստեֆան Շթայների և այլոց հրապարակումներին:

Ուշագրավ է, որ նշված ժամանակամիջոցում շվեյցարական օրաթերթերում իրավիճակն այլ էր, քանի որ դրանցում իրատեսորեն և հստակորեն լուսաբանվում էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը: Այս առումով մեծ արժեք են ներկայացնում մասնավորապես Յոհաննես Լեփսիուսի, Է. Մորաթի, Ալբրեխտ Վիրթի և այլոց հրապարակումները, որոնք կարևոր նշանակություն ունեցան շվեյցարական հասարակայնության իրազեկման հարցում:

Հետպատերազմյան չորս տարիներին Գերմանիայում այլևս ռազմական գրաքննություն չկար, ուստի ժողովածուի երրորդ բաժնում տեղ գտած նյութերը ևս աչքի են զարնում գլխավորապես հայ ժողովրդի ծանր դրության, եղերական իրադարձությունների լուսաբանման և գնահատման անաչառությամբ: Այդ տեսանկյունից առանձնապես արժևորելի են, ի թիվս այլոց, Յոզեֆ Ֆրոբերգերի, Խրիստիան Շրյոդերի, Կարլ Ռոթի, Յոզեֆ Հոֆերի, Յոզեֆ Կիերայի հրապարակումները, որոնք զգալի նշանակություն ունեցան թուրքական ցեղասպան քաղաքականության և հայ ժողովրդի դրության վերաբերյալ գերմանախոս հանրությանն իրազեկելու հարցում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև ժողովածուի եզրափակիչ՝ չորրորդ բաժինը, որտեղ ընդգրկված են սոսկական լրատվությունից մինչև Թալեաթի անցյալին և հայերի եղերական ճակատագրին վերաբերող վերլուծական նյութեր: Այս հանգամանքը բնութագրական է հատկապես Ս. Թեփլիբյանի դատավարության օրերին և այդուհետ լույս տեսած հրապարակումներին: Դրանով հանդերձ՝ քիչ չեն նաև գերմանա-թուրքական՝ ոչ վաղ անցյալի դաշինքին տուրք տվող կարծրատիպերով առաջնորդվող, որպես կանոն, ահաբեկչությունների վերաբերյալ խիստ քննադատական դիրքորո-

շում հանդես բերող նյութերը: Այդ առումով զգալի հետաքրքրություն է ներկայացնում, մասնավորապես, պատերազմի տարիներին թուրքական բանակի գլխավոր շտաբի պետ, գեներալ Բրոնսարտ ֆոն Շելլենդորֆի «Վկայություն Թալեաթ փաշայի համար» հոդվածը, որը հրատարակվել է «Deutsche Allgemeine Zeitung» օրաթերթում: Ի մի բերելով հայերի մասին Գերմանիայում երբևէ տարածված բացասական կարծրատիպերը, խոսելով թուրքերի հանդեպ հայերի կատարած «ոճրագործությունների» մասին, «մաքրագործելով» Թալեաթի կերպարը և լիովին խեղաթյուրելով իրողությունները՝ նա այդպիսով փաստում է, թե անձամբ ինքը՝ որպես գլխավոր շտաբի պետ և նաև, հենց ի դեմս իրեն, Գերմանիայի ռազմական ու քաղաքական ղեկավարությունը Հայոց ցեղասպանության հարցում մեղքի և մեղսակցության ինչպիսի մեծ բաժին ունեն:

Անշուշտ, Էդվարդ Ֆիջիջյանի առաջաբանով և Վոլֆգանգ Գուստի վերջաբանով լույս ընծայված սույն ժողովածուն չի ընդգրկում Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանալեզու բոլոր օրաթերթերում տպագրված հրապարակումները: Այդուհանդերձ, այն կրկին փաստում է, թե որքան կարևոր է շարունակել և ավարտին հասցնել այդ երախտավոր աշխատանքը, որի շնորհիվ ոչ միայն մոռացությունից կփրկվեն մեր ժողովրդի ողբերգական անցյալին վերաբերող բազմաթիվ հրապարակումներ և դրանց հեղինակները, այլև ավելի կամրապնդվի Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողական քաղաքականության դեմ պայքարի գործիքակազմը:

Ի վերջո գաղտնիք չէ, որ թուրքական պատմագիտությունը, օգտագործելով և հղելով իր տեսակետները կապկող այս կամ այն հրապարակումը, գիտակցաբար անտեսում է միևնույն ժամանակ լույս տեսած այն հոդվածները, որոնք հերքում են այդ տեսակետները: Հետևաբար դրանց համահավաք հրատարակությունը և ուսումնասիրությունն ունեն նաև քաղաքական նշանակություն, և կկամենայինք ակնկալել, որ այս կարևոր և արժեքավոր ժողովածուին շուտով կհաջորդեն նորերը:

ՄՇՈՏ ՀՄՅՐՈՒՆԻ

Յակոբ Չոլաքեան, *Տարեգրութիւն Հայ Աւետարանական Բէթէլ Վարժարանի (1923-2013)*, Հալէպ, Հրատարակութիւն Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Կրթական Խորհուրդի, Պէյրութ, 2016, 660 էջ

Յետեղեռնեան սփիւռքը հարիւր տարեկան է: Այդ հարիւր տարիներուն, սփիւռքի բոլոր հայօճախները, առանց բացառութեան, ջանացին իրենց ինքնութիւնը նորովի կերտել նոր միջավայրերուն մէջ: Սկզբնական տարիներուն, այդ հայօճախներուն առարկայական, միջավայրային թէ ենթակայական պայմանները՝ համատեղուածութեան, թուական, մշակութային, արհեստագիտութեան օժտուածութեան, հայատեւումի փափաքը եւ այլ գործօններ՝ ուղիղ համեմատական դարձան նոր հայավայրերուն հայկական դիմագիծի յառաջացման խորութեան: Այս հայավայրերը տակաւ կազմակերպուելով, իրենց միջավայրին մէջ կառուցելով դպրոց, եկեղեցի, մշակութային եւ միութենական հաստատութիւններ, կազմակերպութիւններ դարձան հայօճախներ, ուր կերտուեցաւ յետեղեռնեան հայկական սփիւռքին նոր կեանքը՝ իր մշակութային, տնտեսական, կենցաղային, ազգային, թէ այլ ինքնութենական դրսեւորումներով:

Նորակազմ այս հայօճախներէն մանաւանդ Միջին Արեւելքի մէջ ձեւաւորուածները՝ տուեալ երկրին տնտեսական-ապահովական-քաղաքական-ընկերային-ժողովրդագրական եւ իրաւական գործօններու բարենպաստ հոլովոյթով ու սահմանափակ տեղաշարժերու հետեւանքով կրցան տասնամեակներու վրայ երկարող բնակութեան մէկտեղեալ եւ անփոփոխ վայրեր ունենալ: Այս հայօճախներուն դիմագրաւած ապակայունացնող, տեղաշարժի մատնող գործօնները տասնամեակներ շարունակ վճռական ազդեցութիւն չունեցան (մինչեւ 1946-1948ի հայրենադարձութիւնը), որով՝ տարիներու ընթացքին հայօճախները մնացին յարաբերաբար կայուն, եւ հայակերտումի ամենամեայ ճիգերը եկան գումարուելու եւ աւելնալու նախորդ տարիներու ճիգերուն: Այլ խօսքով, հիմնուածին վրայ կարելի եղաւ յաւելում կատարել ու արմատաւորուիլ եւ ծաղկիլ, քան թէ տեղաշարժերու հետեւանքով լքել եւ միշտ նորը հիմնել: Միւս կողմէն, հայրենադարձութենէն ետք, հոսք մը սկսաւ գիւղական, արուարձանային փոքր բնակավայրերէն դէպի շրջանային կեդրոններ՝ Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Տէր Զօր, Քամիշլի, Պէյրութ, Պուրճ Համուտ եւն., որուն հետեւանքով առաւել հայկականօրէն զօրացան շրջանային այս կեդրոնները ի հեճուկս գիւղական հայավայրերուն, որոնք տակաւ անհետացան:

Եթէ հարիւրամեայ հեռաւորութեամբ յետադարձ հայեացքով քննենք հայօճախները, ապա Միջին Արեւելքի երկիրներու մէջ գոյառած հայկական

մշակութային հաստատությունները, կառույցները կ'առանձնանան իրենց երկարատևությամբ¹: Անոնցմէ շատեր արդէն սկսած են թեւակոխել իրենց հարիւրամեակը՝ ինչ որ կարելիութիւն կու տայ ուսումնասէրին խորունկ դիտարկումի նիւթ դարձնել այդ հաստատութիւնները եւ ուսումնասիրել զանոնք:

Նիւթերու բացակայութեան կամ քիչութեան պատճառով եթէ դժուար է յառաջացնել պատումը հայօճախի կենցաղա-ընկերա-տնտեսական կեանքին, ապա մշակութային հաստատութիւնները եւ կառույցները ունին բաւարար նիւթ, որով կարելի է ուսումնասիրել զանոնք եւ յառաջացնել պատումը տուեալ հայօճախին այս կամ այն հաստատութեան, կառույցին: (Կը թուի թէ սփիւռքահայ հաստատութիւններուն մէջ հայ եկեղեցին ու դպրոցը կ'առանձնանան իրենց յարաբերական կայունութեամբ. կարծէք՝ առաջնորդ հայ անհատը եւ անհատականութեան նկարագիրի գործօնը աւելի երկարատեւ դրական ազդեցութիւն գործած են սփիւռքահայ դպրոցին եւ հաստատութեան վրայ, մինչ միութիւններու վրայ՝ այդ գործօններուն ազդեցութիւնը եղած է աւելի կարճատեւ)²:

Եւ քանի որ որեւէ հայօճախի ոչ մէկ մշակութային հաստատութիւն ինքնակայ է, այլ ընդելուզուած է միջավայրին ու դրսեւորումն է անոր, ապա յառաջացած որեւէ պատում կը բացայայտէ տուեալ հայօճախի կենցաղա-ընկերա-տնտեսական եւ մշակութային կեանքէն երեսակներ:

Այս առումով բացառութիւն չէ վերջերս լոյս տեսած *Տարեգրութիւն Հայ Աւետարանական Բէթել Վարժարանի (1923-2013)* հատորը, հեղինակութեամբ վաստակաշատ բանասէր, տասնամեակներու կրթական մշակ Յակոբ Չոլաքեանի, որուն դերը անուրանալի է Հալէպի Համազգայինի հայագիտական կեդրոնի ծիրին մէջ հայագիտութեամբ զբաղողներու նկատառելի սերունդի մը յառաջացման մէջ եւս:

Չոլաքեանի առջինեկ երկասիրութիւնը չէ ասիկա: Ան ոչ միայն պատմագրական եւ բանահիւսական հարուստ փորձ եւ բերք ունի, այլեւ երախտաշատ աշխատանք կատարած է սուրիահայ - մանաւանդ հալէպահայ - դպրոցներու ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ Քեսապի ու շրջակայից հայութեան անցելի ու ներկայի պատմութեան եւ բանահիւսութեան առումով: Կրթական ծիրին մէջ, իր գրիչին կը պատկանին *Հայերէնի Դասագիրքս* նախակրթարանի, *եւ Անդաստան* միջնակարգ երկրորդական կարգերու հայ գրականութեան եւ լեզուի համադրեալ դասագիրքերը, իւրաքանչիւրը վեցական գիրքով, իսկ հայ դպրոցի պատմութեան կը վերաբերին անոր

¹ Անշուշտ քիչ չէ թիւը անհետացածներուն եւս:

² Ընդհանրապէս, տնօրէնին հեռացումը վարժարանէն՝ կարճատեւ կամ երկարատեւ ծառայութենէ ետք, չէ ունեցած այն ժխտական հետեւանքը որ ունեցած է ներկուսակցական կամ ներմիութենական տագնապի պատճառով անձի մը կամ խմբակի մը հեռացումը այդ կազմակերպութենէն:

1997ին հրատարակուած *Յիսնամեակ Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի (1947-1997)*, 2007ին լոյս տեսած *Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան Վարժարանի (1927-2007)* եւ 2011ին՝ *Ոսկեմատեան Քուէթի Ազգային Վարժարանի (1960-2010) հաստատիոր* հատորները:

Ներկայ հատորին մէջ, հանգամանային մուտքէ մը ետք, Չոլաքեան կ'արժէտրէ գիրքին յառաջացման համար օգտագործուած աղբիւրները (1՝ տպագիր նիւթեր.- յուշամատեան եւ դպրոցական պարբերագիրք, հանդիսութեանց առթիւ լոյս ընծայուած տեղեկատու-յայտագիրքեր, մամուլի մէջ ցրուած նիւթեր, հայ աւետարանականութեան նուիրուած ընդհանրական երկասիրութիւններ, 2՝ արխիւային նիւթեր.- հոգաբարձական եւ ուսուցչական ժողովներու ատենագրութիւններ, դպրոցական օրագրութիւն, գ՝ նկարներ եւ շրջանաւարտութեան ցանկեր), նշելով նաեւ որ մէկտեղուած նիւթերը պակասաւոր են եւ լիուլի չեն արտացոլեր դպրոցին ամբողջ պատմութեան տասնամեակները: Ապա յուժ արժէքաւոր՝ «*Հալէպի հայ գաղթականութիւնը եւ կրթական գործը*» պատմական ներածականէն ետք, Չոլաքեան վարժարանին պատմութիւնը կը ներկայացնէ իբրեւ տարեգրութիւն, եւ առանձնացնելով իւրաքանչիւր տարի, այդ տարիները կը խմբաւորէ տասնամեակներով, ի բացառեալ 1923-1925, 1925-1930 եւ 2010-2013 բաժիններուն¹:

Հատորը մանրամասնեալ, նկարագարող պատմողական տարեգրութիւնն է Հալէպի Հայ Աւետ. համայնքի Բեթէլ Վարժարանի 1923-2013 տարիներու կենսագործունէութեան, ներքին կեանքին, ուսուցչակազմին, տնօրէնութեան տեսլականին եւ բերքին: Ան նաեւ նոյն տասնամեակներուն զայն հովանաւորող հոգաբարձութեան, կրօնական դասուն ու հօտին համայնքային համառօտ անուղղակի պատմութիւնն է:

Ան կը փաստագրէ Հալէպի հայօճախի Բեթէլի հօտի նախանձախնդիր, հետեւողական ու անխտիր ճիգը նորահաս սերունդի հայեցի դաստիարակութեան, եւ յանձնառութիւնը՝ նախաեղեռնեան հայ աւետարանական լուսաւորական ասանդի շարունակումին: Կը դրսեւորէ նաեւ ներհամայնքային, միջհամայնքային եւ համայնք-սուրիական ու Հայաստանի հանրապետութիւններ փոխյարաբերութեանց երեսակներ:

Գիրքին աղբիւրագիտականօրէն հիմնաւորուած այլեւայլ աղիւսակները, վիճակագրութիւնները եւ այլ տուեալներ լոյս կը սփռեն հայօճախին միջավայրին, շրջապատին, ոգիին, ժողովրդագրական պատկերին այլեւայլ հարցերուն, ինչպէս նաեւ՝ այլեւայլ մարտահրաւերներուն եւ առաջադրանքներուն յաղթահարման վրայ: Գիրքը յատկանշական յաւելում մըն է սուրիահայ վարժարաններու կրթական առաքելութեան համապատկերին պատմական լուսաբանման:

¹ Չոլաքեան նման եղանակի դիմած է *Յիսնամեակ Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի (1947-1997)* հատորին պարագային:

Անգնահատելի է Չոլաքեանի պրպտող-համադրող-ներկայացնող բանասերի դերը այս հատորին ծնունդին մէջ: Մակայն, պիտի ուզէինք կատարել մի քանի հարցադրումներ:

Հաստատութեան մը, կառոյցի մը պատմութեան մօտենալու տարեգրութեան եղանակը ունի իր առաւելութիւնները: Տարեգրութիւնը առիթ կու տայ մանրամասնութիւններու մէջ խորանալու, սակայն կը կորսնցնէ համապատկերի հնարաւորութիւնը, բացի եթէ հատորին մէջ տարեգիրը ընդհանրական ամփոփում մը, համապարփակ պատկեր մը եւ եզրայանգումներ հրամցնէ: Մեզի համար անհասկնալի մնաց նաեւ թէ ինչու Չոլաքեան անջատած է վարժարանին պատմութիւնը տասնամեակներով, որոնք միշտ չէ որ կը գուգադիպին տնօրէնութեան փոփոխութեան կամ՝ վարժարանին համար հիմնարար որեւէ այլ անկիւնադարձի:

Թերեւս, հեղինակին պատմագրութեան «տարեգրութիւն» եզրի սահմանումը մղած է զինք նման մօտեցումներու: Մեզի կը թուի, սակայն, թէ այս մօտեցումները կրնան պարագայական դժուարութիւններու արդիւնք ըլլալ, կամ՝ թելադրութեանց, եւ կամ կրնան բխած ըլլալ Մուրիոյ մէջ ծայր տուած պատերազմական վիճակէն: Եւ հոս՝ պէտք է կարեւորել հատորին ծնունդին փաստը:

Իրապէս, դժուար է բառերով կարելորել, գերագնահատել նման ուսումնասիրութեան մը յառաջացումը:

Վերջին հարիւրամեակի բանաւոր պատմութեան, հաւաքական յիշողութեան կորուստի դամոկլեան սուրը կախուած է ամբողջ Միջին Արեւելքի հայօճախներուն վրայ: Եւ եթէ չփրկենք այն ինչ որ կարելի է մեծ ճիգերով փրկել այսօր, պատմութիւնը պիտի արձանագրէ թէ կար ու կային Միջին Արեւելքի ծաղկուն հայօճախներ ու... չկան:

Այսպէս է որ, այսօր, Միջին Արեւելքի հարիւրհազարաւոր կորովի, աշխուժ, աշխատասէր, կենսասէր, կեանք վերարտադրող, ստեղծագործ հայերու հարիւրամեայ պատմութեան մէկ մասը կորսուած է, իսկ միւս մասը՝ կորսուելու եզրին է, եթէ շարունակենք այդ պատմութեան հանդէպ պարտագանց մնալ:

Ահա այս խորապատկերին վրայ պէտք է դիտել այս հատորը, որ նուիրուած է Հալէպի մայր գաղութին մէջ սերունդներ յառաջացուցած քուրայի մը: Այս քուրան, հակառակ տարապայման դրութեան, կը շարունակէ իր անփոխարինելի առաքելութիւնը: Միայն ուրախութիւն եւ գոհունակութիւն կրնայ պատճառել այս գիրքին ծնունդը, որով վերջնականօրէն կը փրկուի պատմութեան կարելոր գոյի մը՝ Հայ Աւետ. Բեթէլ վարժարանին վերաբերող հատուածը՝ հալէպահայ կրթական պատմութեան ստուար հատորին համար: Կը փրկուին նաեւ անոր տեսիլքն ունեցող եւ զայն յաջողցնող մարդկային ազնիւ ճիգին տէրերը, կը գնահատուին մշակները: Կը յառաջանայ նաեւ կարելիութիւնը այդ տուեալներն ու տեղեկութիւնները իբրեւ աղբիւր օգտագործելով համադրաբար յառաջացնել հալէպահայ կրթական պատմու-

թեան վերջին հարիւր տարուան պատումի սպիտակ գիրքին էջերուն մէկ մասը:

Արդարեւ, վաւերատեղեկագրական բնոյթի այս ուշագրաւ, բժախնդիր եւ երախտաշատ հետազօտութիւնը սկզբնադրիւր կը հանդիսանայ Միջին Արեւելքի եւ ընդհանրապէս Մփիւռքի հայ դպրոցին պատմահամեմատական վերլուծութեան: Մանաւանդ որ, հայօճախներու պատմութեան առումով, հաւանաբար, յարաբերաբար ամենէն շատը ուսումնասիրուած եւ տպագիր նիւթ ունեցողը սփիւռքահայ դպրոցն է:

Եզրակացնելով, կրնանք միայն երախտիքի խօսք ուղղել հատորին հեղինակին, անոր օգնականներուն եւ շուրջ հարիւրամեայ այս վարժարանին աւանդն ու կենսագործունէութիւնը պատմութեան ժառանգ ձգելու նախանձախնդիր հանդիսացած պատասխանատուներուն:

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ադամյան Նինետա	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ (ninettadamyam@gmail.com)
Ազատյան Արա	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ (arazatyan@mail.ru)
Ավագյան Արծրուն	ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրո- ֆեսոր (a.avagyan@ysu.am)
Բայբուրդյան Վահան	ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դի- վանագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմա- կան գիտությունների դոկտոր (vbayburdyan1933@gmail.com)
Զաքարյան Սեյրան	ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկ- տոր, պրոֆեսոր (szakaryan@ysu.am)
Թեյյան Լեոնիդ	ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բանասիրա- կան գիտությունների թեկնածու (telyanleonid@ysu.am)
Թունյան Վալերի	Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի պրոֆե- սոր, պատմական գիտությունների դոկտոր (tunyanvalery@rambler.ru)
Հայրապետյան Տաթևիկ	պատմական գիտությունների թեկնածու (haytatev@gmail.com)
Հայրունի Աշոտ	ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (ashot.hayruni@ysu.am)
Միրզոյան Էլինա	ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ, ՀՅԹԻ-ի կրտսեր գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու (elina-mirzoyan@ysu.am)
Պետրոսյան Գեղամ	ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլ- տետի դեկան, պատմական գիտությունների դոկ- տոր, պրոֆեսոր (gegham.petrosyan@ysu.am)

Պետրոսյան Վահրամ	ԵՊՀ ՀՀԻ հայ-քրդական առնչությունների բաժնի վարիչ, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (vahram_petrosyan@ysu.am)
Պետրոսյան Վարդան	ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ (vz.Petrosyan@ysu.am)
Պողոսյան Նարեկ	ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ (poghosyan92@bk.ru)
Պողոսյան Նորայր	ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (Norayr.poghosyan@ysu.am)
Պողոսյան Վարուժան	ԵՊՀ ՀՀԻ ցեղասպանագիտության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր (varoujean.poghosyan@ysu.am)
Սահակյան Արծրունի	ԵՊՀ հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի պրոֆեսոր, պատմական և բանասիրական գիտությունների դոկտոր (artsrunisahakyan@ysu.am)
Սարգսյան Արտաշես	ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու (artashes.sargsyan@ysu.am)
Վարդանյան Արգիշտի	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու
Տազևեսեան Անդրանիկ	Բեյրութի Հայկազյան համալսարանի հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն, քաղաքական գիտությունների դոկտոր (adakessian@haigazian.edu.lb)

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

Адамян Нинетта	Соискатель Института истории НАН Армении (ninettadamyan@gmail.com)
Азатян Ара	Соискатель Института истории НАН Армении (arazatyan@mail.ru)
Авагян Арцрун	Декан факультета армянской филологии ЕГУ, доктор филологических наук, профессор (a.avagyan@ysu.am)
Айрапетян Татевик	кандидат исторических наук (haytatev@gmail.com)
Айруни Ашот	Профессор кафедры истории армянского народа ЕГУ, ведущий научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук (ashot.hayruni@ysu.am)
Байбурдян Ваган	Профессор кафедры международных отношений и дипломатии ЕГУ, доктор исторических наук (vbayburdyan1933@gmail.com)
Варданян Аргишти	Старший научный сотрудник Института истории НАН Армении, кандидат исторических наук
Дакесян Андраник	Директор Центра исследований армянской диаспоры Университета Айказян (Бейрут), доктор политических наук (adakesian@haigazian.edu.lb)
Закарян Сейран	Заведующий кафедрой истории философии ЕГУ, доктор философских наук, профессор (szakaryan@ysu.am)
Мирзоян Элина	Ассистент кафедры тюркологии ЕГУ, младший научный сотрудник Музея-института Геноцида армян НАН РА, кандидат филологических наук (elina-mirzoyan@ysu.am)
Петросян Гегам	Декан факультета международных отношений ЕГУ, доктор исторических наук, профессор (gegham.petrosyan@ysu.am)
Петросян Ваграм	Заведующий отделом армяно-курдских отношений Института арменоведческих исследований ЕГУ, кандидат исторических наук, доцент (vahram_petrosyan@ysu.am)
Петросян Вардан	Заведующий кафедрой общего языкознания, кандидат филологических наук, доцент (vz.Petrosyan@ysu.am)
Погосян Варужан	Заведующий отделом геноцидоведения Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук (varoujean.poghosyan@ysu.am)

- Погосян Нарек** Аспирант Музея-института Геноцида армян НАН РА (poghosyan92@bk.ru)
- Погосян Норайр** Доцент кафедры истории армянского языка ЕГУ, кандидат филологических наук (Norayr.poghosyan@ysu.am)
- Саакян Арцруни** Профессор кафедры истории Армянской церкви ЕГУ, доктор исторических и филологических наук (artsrunisahakyan@ysu.am)
- Саркисян Арташес** Доцент кафедры армянского языка ЕГУ, кандидат филологических наук (artashes.sargsyan@ysu.am)
- Телян Леонид** Доцент кафедры армянского языка ЕГУ, кандидат филологических наук (telyanleonid@ysu.am)
- Тунян Валерий** Профессор Ереванского филиала Российского государственного университета туризма и сервиса, доктор исторических наук (tunyanvalery@rambler.ru)

INFORMATION ABOUT THE AUTHORS

- Adamyan Nineta** PhD student at the Department of Modern History of the Institute of History of NAS RA (ninettadamyan@gmail.com)
- Avagyan Artsrun** Doctor of Philology, Professor, Dean of the Faculty of Armenian Philology, YSU (a.avagyan@ysu.am)
- Azatyán Ara** PhD student at the Institute of History (arazatyan@mail.ru)
- Bayburdyan Vahan** Doctor of History, Professor at the Chair of International Relations and Diplomacy of YSU (vbayburdyan1933@gmail.com)
- Dakessian Andranik** Doctor of Political Sciences, Director of the Armenian Diaspora Research Centre of Haigazian University in Beirut (adakessian@haigazian.edu.lb)
- Hayrapetyan Tatevik** PhD in History (haytatev@gmail.com)
- Hayruni Ashot** Senior Researcher at the Institute for Armenian Studies of YSU, Professor at the Chair of Armenian History, YSU, Doctor of History (ashot.hayruni@ysu.am)
- Mirzoyan Elina** PhD, Assistant Professor at the Chair of Turkish Studies of YSU, Scientific researcher of the Armenian Genocide Museum-Institute of the National Academy of Sciences of the Republic of Armenia (elina-mirzoyan@ysu.am)
- Petrosyan Vahram** PhD in History, Associate Professor, Head of the Department of Armenian-Kurdish Relations of the Institute for Armenian Studies of YSU (vahram_petrosyan@ysu.am)
- Petrosyan Vardan** PhD in Philology, Associate Professor, Head of the Chair of General Linguistics, YSU (vz.Petrosyan@ysu.am)
- Poghosyan Narek** PhD Student at the Museum-Institute of NAS RA (poghosyan92@bk.ru)
- Poghosyan Norayr** PhD in Philology, Associate Professor at the Chair of History of Armenian Language of YSU (Norayr.poghosyan@ysu.am)
- Poghosyan Varoujean** Doctor of History, Head of the Department of Genocide Studies of the Institute for Armenian Studies of YSU (varoujean.poghosyan@ysu.am)
- Sahakyan Artsruni** Doctor of History and Philology, Professor at the Chair of History of Armenian Church (artsrunisahakyan@ysu.am)

Sargsyan Artashes PhD in Philology, Associate Professor at the Chair of the Armenian Language, YSU (artashes.sargsyan@ysu.am)

Telyan Leonid PhD in Philology, Associate Professor at the Chair of the Armenian Language, YSU (telyanleonid@ysu.am)

Tunyan Valery Doctor of History, Professor at the Yerevan Branch of Russian State University of Tourism and Service (tunyanvalery@rambler.ru)

Vardanyan Argishti PhD in History, Senior Researcher at the Department of Medieval History of the Institute of History of NAS RA

Zakaryan Seyran Doctor of Philosophy, Head of the Chair of History of Philosophy, YSU (szakaryan@ysu.am)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Արժրունի Սահակյան

Մի համաշխարհային խորհրդանիշի հուղայական ակունքը.
տապանակիր լեռան ավանդապատումը և Հայաստանի
սրբազնացումը..... 3

Արգիշտի Վարդանյան

Մամիկոնյանները 774-775 թթ. հակաարաբական
համաժողովրդական ապստամբության շրջանում..... 16

Գեղամ Պետրոսյան

Թուրքիային տարածքային զիջումների հարցը Տրապիզոնի
հաշտության խորհրդաժողովում (1918 թ. մարտ-ապրիլ)..... 29

Աշոտ Հայրունի

Հայկական հարցը Գերմանիայի արտաքին քաղաքականության
մեջ գերմանա-թուրքական հարաբերությունների համատեքստում
(1918 թ. մարտ-հունիս) (գերմաներեն) 42

Արա Ազատյան

Հայաստանի խորհրդայնացման մայիսյան փորձի գնահատման
շուրջ 63

Նարեկ Պողոսյան

«Հումանիտար ինտերվենցիայի» հասկացությունը և հայերի
պաշտպանության համար ինտերվենցիաները Ռաֆայել Լեմկինի
գործերում 75

Տաթևիկ Հայրապետյան

Հակաալիկյան դժգոհությունների ճնշումը և Հեյդար Ալիևի դիրքերի
ամրապնդումն Ադրբեջանում (1995-1998 թթ.)..... 87

Էլինա Միրզոյան

Ազգային ինքնության խնդիրը «Ակոս» երկլեզու շաբաթաթերթում
Հրանտ Դինքի խմբագրապետության տարիներին (1996-2007)..... 101

Արժրուն Ավագյան

Վահան Թեքեյան-Լևոն Զավեն Սյուրմելյան. սերտ
բարեկամություն և անդարձ բաժանում 117

Վարդան Պետրոսյան

Հին հայերենի եռաբարբառյան կազմությունները
(համաժամանակյա հայեցակետ)..... 128

Լեոնիդ Թեյյան	
Շարահյուսական նորմ. գուգաձևեր և շեղումներ	137
Արտաշես Սարգսյան	
Թվային համաձայնությունը հայերենի բարդ նախադասություններում.....	149
Սեյրան Զաքարյան	
Արդյո՞ք սքոլաստիկական էր XIV դարի հայ փիլիսոփայությունը.....	162

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Վարուժան Պողոսյան	
Հ. Ա. Մանանդյանի և նրա վրացի գործընկերների գիտական համագործակցության շուրջ (ռուսերեն)	175
Նինետա Ադամյան	
Փաստաթղթեր Կովկասի Հայոց Բարեգործական ընկերության գաղթականներին ցուցաբերած օգնության պատմությունից (1915 թ. հունվար, նոյեմբեր) (ռուսերեն).....	185

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորայր Պողոսյան	
Հրաչիկ Միրզոյան, Հայ գրքի և գրատպության պատմության փիլիսոփայական անդրադարձներ	198
Վահրամ Պետրոսյան	
Նիկոլայ Հովհաննիսյան, Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը	204
Վահան Բայբուրդյան	
Շիրակ Թորոսյան, Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919-1920 թթ.	210
Վալերի Թունյան	
Ղարաբաղ. պատմություն առճակատման համատեքստում (ռուսերեն)	217
Աշոտ Հայրունի	
Էդվարդ Ֆիջիջյան (հրատարակիչ), Հայոց ցեղասպանությունը գերմանալեզու օրաթերթերի հայելիում 1912-1922 թթ.....	230
Անդրանիկ Տազէսեան	
Յակոբ Չոլաքեան, Տարեգրութիւն Հայ Աւետարանական Բէթէլ Վարժարանի (1923-2013)	234
Տեղեկություններ հեղինակների մասին	239

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Арцруни Саакян	
Иудейские истоки формирования одного мирового символа: миф о горе, сакрализованной Ноевым Ковчегом	3
Аргишти Варданян	
Мамиконяны в период антиарабского общенародного восстания 774-775 гг.	16
Гегам Петросян	
Вопрос о территориальных уступках Турции на Трапезундской мирной конференции (март-апрель 1918 г.)	29
Ашот Айруни	
Армянский вопрос во внешней политике Германии в контексте немецко- турецких отношений в марте-июне 1918 г. (на немецком языке)	42
Ара Азатян	
Относительно оценки майского опыта советизации Армении	63
Нарек Погосян	
Понятие «гуманитарной интервенции» и «интервенции» Рафаэля Лемкина в защиту армян	75
Татевик Айрапетян	
Укрепление власти Гейдара Алиева в Азербайджане в 1995-1998 гг.	87
Элина Мирзоян	
Проблема национальной идентичности на страницах газеты «Акос» в годы редакторства Гранта Динка (1996-2007 гг.)	101
Арцрун Авагян	
Ваган Текеян-Левон Завен Сюрмелян: тесная дружба и безвозвратное расставание	117
Вардан Петросян	
Трифтонговые образования в древнеармянском языке (синхронный аспект)	128
Леонид Телян	
Синтаксическая норма: вариативные формы и отклонения	137
Артасеш Саркисян	
Согласование в числе в сложных предложениях в армянском языке	149
Сейран Закарян	
Была ли схоластической армянская философия XIV века?	162

ПУБЛИКАЦИИ

Варужан Погосян

К истории научного сотрудничества Я. А. Манандяна с грузинскими коллегами (на русском языке)..... 175

Нинетта Адамян

Документы из истории помощи, оказанной беженцам Кавказским Армянским Благотворительным обществом (январь, ноябрь 1915 г.) (на русском языке) 185

РЕЦЕНЗИИ

Норайр Погосян

Грачик Мирзоян, Философские отклики истории армянской книги и книгопечатания 198

Ваграм Петросян

Николай Оганисян, Участие курдов в Геноциде армян 204

Ваган Байбурдян

Ширак Торосян, Вопрос о выходе к морю во внешней политике Республики Армения в 1919-1920 гг. 210

Валерий Тунян

Карабах: история в контексте конфликта, 2014 (на русском языке) 217

Ашот Айруни

Эдуард Фиджиджян (издатель), Геноцид армян в зеркале немецкоязычных газет в 1912-1922 гг. 230

Андраник Дакесян

Акоп Чолакян, Летопись Армянского Евангельского училища Бетел (1923-2013) 234

Сведения об авторах 241

COTENTS

ARTICLES

Artsruni Sahakyan	
The Jewish Source of the Formation of a Global Symbol: the Myth of the Mountain Sanctified by Noah's Ark.....	3
Argishti Vardanyan	
The Mamikonians During Anti Arab National Uprising of 774-775 Years	16
Gegham Petrosyan	
The Issue of Territorial Concessions to Turkey in Trabzon Peace Conference (March-April, 1918).....	29
Ashot Hayruni	
The Armenian Question in the Foreign Policy of Germany in the Context of German-Turkish Relations (March-June 1918) (in German).....	42
Ara Azatyan	
On the Evaluation of the May Attempt of the Sovietization of Armenia	63
Narek Poghosyan	
Concept of the "Humanitarian Intervention" and Raphael Lemkin's "Interventions" for the protection of Armenians.....	75
Tatevik Hayrapetyan	
The Strengthening of Heydar Aliyev's Power in Azerbaijan During 1995-1998.....	87
Elina Mirzoyan	
The Problem of National Identity in the Pages of the "Agos" Weekly During the Years of Hrant Dink's Editorship (1996-2007).....	101
Artsrun Avagyan	
Vahan Tekeyan-Levon Surmelyan: Close Friendship and Irrevocable Parting.....	117
Vardan Petrosyan	
Old Armenian Triphthongal Combinations (a Synchronic Approach).....	128
Leonid Telyan	
The Syntactic Norm: Variation Forms and Deviations	137
Artashes Sarkisyan	
The Agreement of Numbers in Composite Sentences in Armenian.....	149
Seyran Zakaryan	
Was the XIV Century Armenian Philosophy Scholastic?	162

PUBLICATIONS

Varoujean Poghosyan

On the Scientific Cooperation between H.A. Manandyan and his Georgian
Colleagues (in Russian)..... 175

Nineta Adamyán

Documents Concerning the History of Aid to Refugees Provided
by Armenian Benevolent Society in the Caucasus
(January, November 1915) (in Russian)..... 185

REVIEW

Norayr Poghosyan

Hrachik Mirzoyan, Philosophical Reflections on the History
of Armenian Books and Printing..... 198

Vahram Petrosyan

Nikolay Hovhannisyan, The Participation of Kurds in the Armenian
Genocide..... 204

Vahan Bayburdyan

Shirak Torosyan, The Problem of Marine Exit in the Republic of Armenia's
Foreign Policy During 1919 and 1920 210

Valery Tunyan

Karabakh: History in the Context of Conflict (in Russian) 217

Ashot Hayruni

Edvard Fijijyan (Editor), The Armenian Genocide in the Mirror
of the German Newspapers in 1912-1922 230

Andranik Dakesyan

Hakob Cholakyan, Chronicles of Armenian Evangelical College
of Bethel (1923-2013) 234

Information about the Authors 243

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

1 (10)

Սրբագրիչ՝ Վ. Դերձյան
Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի

Չափսը՝ 70x100 1/16:
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն և ռուսերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն և ռուսերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:

2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:

3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (զլխատառերով), վերնագիրը (զլխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլփոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):

4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

5. Տալ բանալի բառեր:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (handes@armin.am), հեռ. +374 60 710092

NOTICE FOR THE AUTHORS

The articles should be represented in USB flash drive (text should be in Microsoft Word Document, pictures – TIFF or JPG). The main language of the article is Armenian (with summary in English and in Russian, about 300 words), if the articles are in Russian, English, French, German there should be a summary in Armenian and in Russian (about 300 word).

The criteria are the following:

1. Theme font – Sylfaen (in Armenian), Times New Roman (in other languages)

2. Font Size – 12, Line Space – 1.5

3. At the beginning of the article there should be the name and surname of the author (uppercase), the title (uppercase), at the end of the article there should be the academic degree of the author, workplace, position, telephone number and E-mail (telephone number and e-mail are published according the author's agreement)

4. The references should be footnoted; font size- 10, the author, the title, volume, place and date of publication (also the number, if the article was published in magazine) and the page should be mentioned.

5. To write key words.

The articles are accepted in the Institute for Armenian studies of YSU, Alex Manoogian 1, YSU 2nd annex, 5th floor, room N 511, the editorial office of the bulletin “Armenological Issues” (handes@armin.am), tel.: +374 60 710092

К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Статьи необходимо представлять на электронном **флеш-накопителе** (текст – Word, фотографии – TIFF или JPG в высоком качестве). Основной язык – армянский, принимаются также статьи на русском, английском, французском и немецком языках, которые должны иметь резюме (в случае армянского текста – на английском и русском языках, в случае других языков – на армянском и русском, около 300 слов).

Параметры

1. Шрифт армянского языка - Sylfaen, других языков - Times New Roman.

2. Размер шрифта – 12, межстрочный пробел - 1.5.

3. В начале статьи дается имя и фамилия автора (заглавными буквами), заголовок (заглавными буквами), в конце статьи отмечается ученая степень автора, место работы, должность, номер телефона и адрес электронной почты (номер телефона и адрес электронной почты печатается с согласия автора).

4. Ссылки даются под строкой в порядке возрастания, размер шрифта - 10, дается автор источника, заголовок, том, место и год издания (в случае прессы также и номер) и страница.

5. Дать ключевые слова.

Статьи принимаются в

Институте арменоведческих исследований ЕГУ,

Алека Манукяна 1, 2 корпус ЕГУ, 5-й этаж, комната 511, редакция журнала «Вопросы арменоведения» (handes@armin.am), тел.: +374 60 710092